



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ ՀՕՄ-Ի**  
**ՊԱՏԳԱՄԱԴՈՐԱԿԱՆ 86-ՐԴ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Հինգշաբթի, Յուլիս 13-ի կեսօրին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ներկայ եղաւ Հայ Օգնութեան Միութեան Շրջանային Վարչութեան 86-րդ Պատգամաւորական ժողովի բացման հանդիսութեան, կատարեց բացման աղօթքը եւ ժողովականներուն ուղղեց իր պատգամը:

Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Հոգեւոր Հովիւները՝ Արժ. Տ. Նարեկ Քիւյ. Փեիլիւանեան եւ Տ. Աշոտ Քիւյ. Գամպուրեան: Ներկայ էր նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Բացումը տեղի ունեցաւ Whittier շրջանի «Ռետիսըն» պանդոկին մէջ:

Նշենք որ, ՀՕՄ-ը արդէն իսկ ձեռնարկած է իր 100-րդ տարեդարձի պատրաստութեան աշխատանքներուն եւ այդ նպատակով յատուկ յանձնախումբ մը յառաջացուցած է: Հինգշաբթի, Յուլիս 6-ին, Ազգ. Առաջնորդարան այցելեցին ՀՕՄ 100-ամեակի յանձնախումբի ներկայացուցիչները եւ հանդիպում մը ունեցան Առաջնորդ Սրբազան հօր հետ: Անոնք տեղեկութիւններ փոխանցեցին ապագայ ծրագիրներու եւ աշխատանքներու մասին: Առաջնորդ Սրբազան հայրը իր կարգին փոխանցեց իր օրհնութիւններն ու քաջալերանքը:

**ON THE OFFICIAL OPENING OF THE 86<sup>TH</sup> REGIONAL CONVENTION OF**  
**THE A.R.S. W.R., THE PRELATE DELIVERED HIS INVOCATION AND**  
**MESSAGE**

On Thursday, July 13, the 86<sup>th</sup> regional convention of the Armenian Relief Society's Western Region began at the Radisson Hotel in Whittier. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted the opening prayer and delivered his remarks to the members.

The Prelate was joined by Rev. Nareg Pehlivanian and Rev. Ashod Kambourian of Holy Cross Cathedral in Montebello, as well as Executive Council Chair Dr. Garo Agopian.

Let us note that the A.R.S. has already designated a special committee to begin preparations for the 100<sup>th</sup> anniversary celebration. On Thursday July 6, representatives of this committee met with the Prelate and reported on their future endeavors. The Prelate offered his blessings and encouragement.

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԲՈՐԷ ԱՇՈՒՂ ՋԻՎԱՆԻԻ ԾՆՆԴԵԱՆ 160 ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒՄԾ ՁԵՌՆԱՐԿ

Շաբաթ, Յուլիս 15-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Կլենտէյլ High School-ի սրահին մէջ տեղի պիտի ունենայ համերգ մը, հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հօր: Համերգը նուիրուած է Աշուղ Ջիւանիի ծննդեան 160ամեակին որ պիտի կատարէ բազմաձայնային երգչուհի ժողովրդական եւ աշուղական երգերու մենակատար Հերմինէ Ամիրեան, ընկերակցութեամբ ժող-գործիքներու նուագախումբի եւ «Տաւիղ» պարախումբին:

Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, իբրեւ Առաջնորդ Սրբազան հօր ներկայացուցիչը, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին: Հայր Սուրբին պիտի ընկերանայ Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեան: Ձեռնարկին հասոյթը պիտի տրամադրուի Հայաստանի Ջիւանիի անուան աշուղական դպրոցին:

## UNDER THE AUSPICES OF THE PRELATE, CONCERT DEDICATED TO THE 160<sup>TH</sup> BIRTHDAY OF ASHOUGH JIVANI

On Saturday, July 15, a concert to mark the 160<sup>th</sup> birthday of a prominent Armenian bard singer, Ashough Jivani, will take place at 7:30 p.m. at Glendale High School. The concert, held under the auspices of the Prelate, will feature soloist Hermine Amirian, accompanied by a traditional Armenian band and the "Tavigh" dance group.

Very Rev. Fr. Muron Aznikian, accompanied by Rev. Gomidas Torossian, will represent the Prelate. Proceeds from the concert will benefit the Jivani music school in Armenia.